ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ՀՆԱԳԻՏ-ՊԱՏՄԱԲԱՆԸ

(Ս. Գ. Բարխուդարյանի ծննդյան 75-ամյակի առթիվ)

Հ. Գ. ԹՈՒՄՅԱՆ

Արդի հայագիտության երախտավորներից է Սեդրակ Բարխուդարյանը։ Նրա գիտական աշխատանքները ստեղծվել են ավելի քան չորս տասնյակ տարիների ընթացքում և ընդգրկում են հնագիտության ու վիմական արձանագրությունների մի շարք կարևոր հարցեր։

Բարխուդարյանը ծնվել է 1898 թ. Պարսկաստանի Սալմաստ գավառի Հավթվան գյուղում, աշխատավոր գյուղացու ընտանիքում։ Նա ավարտել է գյուղի տարրական դպրոցը և հիմնավոր կրթություն ստանալու բուռն ցանկությամբ, պատանի հասակում, իր հոր ընկերոջ ուղեկցությամբ մեկնում է Լեհաստան։ Բայց այնտեղ երկար չի մնում։ Երբ Բարխուդարյանների ընտանիքը Պարսկաստանից տեղափոխվում է Թիֆլիս, Սեդրակը Կրակովից գալիս է ծնողների մոտ։ Կրթություն ստանալու ձգտումը նրան սկզբում իրագործել չի հաջողվում։ Թիֆլիս տեղափոխված ընտանիքին օգնելու անհրաժեշտությունը ստիպում է Բարխուդարյանին սովորել քաղաքում ամենատարածված արհեստը՝ կոշկակարություն։ Նա սիրում էր կարդալ և ձեռքից ցած չէր դնում գիրքը անգամ արհեստով զբաղված ժամանակ։ Միայն 1924 թ. նրան հաջողվում է էքստերն կարգով ավարտել Ներսիսյան դպրոցը։ Նույն տարում նա գալիս է Երևան, ընդունվում համալսարանի պատմագրական ֆակուլտետը։

Տակավին ուսանողության տարիներին Բարխուդարյանը աչքի էր ընկնում Հայաստանի և ընդհանրապես Անդրկովկասի հնադարյան կյանքի պատմության իմացությամբ, հետաքրքրվում էր նյութական մշակույթի հուշարձանների ուսումնասիրության հարցերով։ Նա իր շուրջն էր համախմբում ֆակուլտետի ուսանողներին, կազմակերպում հայագիտական և հնագիտական հարցերի ուսումնասիրության գիտական խմբակներ։ Համալսարանը հաջողությամբ ավարտելուց հետո Ս. Բարխուդարյանը 1928 և 1929 թթ. ուսուցչի պաշտոն է վարում Նոր Բայազետի մանկավարժական տեխնիկումում։ Այդ տարիներին նրա ուշադրությունը գրավում են Նոր Բայազետի շրջանի հնադարյան մշակույթի հարուստ մնացորդները։ Նա տեխնիկումի աշակերտների հետ շրջագայում է գյուղերում, կազմում շրջանի հնագիտական քարտեզը։

Տարիներ անց Բարխուդարյանը ձեռնարկում է ուսումնասիրելու Սևանա լճի ավազանում նախաուրարտական ժամանակաշրջանում բնակված տոհմացեղային խմբերից մեկի բնակավայրը՝ Վելիքուխին, որը բևեռագիր արձանագրությունների տվյալներով զբաղեցնում էր հենց այն տարածքը, որի հնագիտական քարտեզը երիտասարդ գիտնականը կազմել էր դեռևս Նոր Բայազետում ուսուցչական պաշտոն վարելու ժամանակ։ «Վելիքուխի երկիրը» խորագրով իր ուսումնասիրությունը շարադրելիս նա օգտագործել է ոչ միայն ուրարտական արձանագրությունները, այլև գլխավորապես այն հա-

ռուստ նյութական կուլտուրայի մնացորդները, որոնք հայտնաբերվել էին պեղումների ժամանակ Նոր Բայազետ քաղաքի մոտակայքում և նրա շրջանում։

Իր աշխատության սկզբում հեղինակը քննադատում է պատմական երկերի մեջ գործածվող «նախապատմական» տերմինը, գտնելով, որ այն հնացած է, որ շատ տեղերում հայտնաբերված են մինչ այդ անծանոթ գրավոր հիշատակարաններ, որոնք լույս են սփռում «նախապատմական» կամ «անգիր» ժողովուրդների պատմության վրա։ Մեր թվականությունից առաջ, ասում է նա, X դարից մինչև VI դարը Հայաստանի պատմության մեջ համարվում էր «անհայտ», «անորոշ», «նախապատմական» մի ժամանակաշրջան։ Բայց XIX դարում հայտնաբերված խալդական սեպագիր արձանագրությունները «ի հայտ բերին մի ամբողջ նոր աշխարհ՝ խալդ-ուրարտական ժողովուրդներին»։ «Նախապատմական» կոչված դարաշրջանների հասարակական ֆորմացիաների պատմության լուսաբանմանը, Բարխուդարյանի կարծիքով, մեծապես նպաստում է հնագիտությունը՝ նյութական մշակույթի պատմությունը (հուշարձաններ, զենքեր, զարդեր, խեցեղեն, տնային պաշտամունքի իրեր և այլն)։

Հենվելով պատմագիտության մարքսիստական տեսության վրա՝ հեղինակը «Վելիքուխիի» տոհմատիրական-ցեղային ժամանակաշրջանը համարում է նախադասակարգային։ Վելիքուխիի հասարակական կազմը նա նմանեցնում է Էնգելսի նկարագրած իրոկեզների կամ հույների տոհմա-ցեղային կազմակերպության։ Պեղումներից ստացված նյութական մշակույթի մնացորդների ուսումնասիրությունը, ըստ Բարխուդարյանի, ցույց է տալիս, որ այն պատկանում էր բրոնզի դարին և երկաթի դարի սկզբնավորության շրջանին։ Կլիմայական նպաստավոր պայմանները հնարավորություն էին տալիս տոհմերին պարապելու անասնապահությամբ և հողագործությամբ։ Բավական զարգացած էր կավագործությունը։ Մի տոհմի ուժերից վեր կառուցվածքների գոյությունը «Բերդ-շեներում» ցույց է տալիս, որ տոհմերի միջև զարգացած էր համայնական աշխատակցությունը։ Երկրի տերիտորիան ծածկված է եղել անտառներով, որոնք այժմ չկան։ Վելիքուխի անվանումից է ծագում հայկական Գեղարքունի տեղանունը (վել-գել-գեղ արմատից)։

Նշված ուսումնասիրությունը զեկուցված է Կուլտուրայի պատմության ինստիտուտի պատմական սեկցիայի հատուկ նիստում։ Աշխատանքը ստացել է բարձր գնահատական, 1933 թ. արժանացել է «Մելքոնյան» մրցանակի և տպագրված է Կուլտուրայի պատմության ինստիտուտի աշխատությունների առաջին հատորում[1]։

Նույն ժողովածուում է տպագրված գիտնականի նաև «Երկու արամեատառ արձանագրություն» վերնագրով[2] արժեքավոր հոդվածը։

Բարխուդարյանը հայ վիմական արձանագրությունների անխոնջ հավաքող և հիանալի վերծանող էր։ Այդ հիման վրա է կատարված նրա «Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ» մեծարժեք աշխատությունը, որ նա պաշտպանել է իբրև թեկնածուական դիսերտացիա։ Իր աշխատությունը շարադրելու համար, բացի հայ վիմական արձանագրություններից, հեղինակը մանրամասն ուսումնասիրել է մեր հարուստ հին և նոր գրականությունը։

---

1 «Նյութեր հին Հայաստանի պատմության», Երևան, 1935, էջ 150—204։

2 Նույն տեղում, էջ 207—214։

«Քարգործ վարպետներ» ասելով, Բարխուդարյանը հասկանում է այն բոլոր վարպետներին, որոնց ջանքերով կառուցվել են հայկական միջնադարյան քարաշեն մեծ ու փոքր հուշարձանները։ Նրանց գործունեության սկիզբը, հեղինակի հավաստմամբ, ծագում է խոր հնադարում, պալեոլիթի և նեոլիթի դարաշրջաններում։ Այդ բանը նա մակաբերում է վարպետների գործածած քարե գործիքներից, ստեղծած քարաշեն բնակարանների մնացորդներից, գերեզմաններից, ժայռերի վրա փորագրված մարդկանց և կենդանիների քանդակներից ու սիմվոլիկ նշաններից։ Մեր «քարգործ» վարպետները մեծ հմտության են հասնում հետագա դարաշրջաններում, ոճքերի, քարե կացինների, քարե նետասլաքների պատրաստման գործում։ Նրանց անունները ծածկված են անհայտության քողով։ Անհայտ են նաև ուրարտական պետականության ժամանակ որպես մասնագետ քարգործ վարպետ աշխատող այն տաղանդավոր արհեստավորների անունները, որոնք կառուցել են պալատներ, տաճարներ, քաղաքներ, արձաններ, բերդապարիսպներ։ Հայկական պետականության ժամանակ քարգործ վարպետների ձեռքով են շինվել Արտաշատը, Տիգրանակերտը, Դվինը, Գառնին և այլն՝ իրենց պալատներով և տաճարներով։



«Քարգործ վարպետներ» ընդհանուր անվան տակ հեղինակը խմբել է միջնադարյան բոլոր հայ վարպետներին, որոնց նա բաժանում է չորս հիմնական խմբերի՝ ճարտարապետներ, քանդակազարդող վարպետներ, արձանագիր վարպետներ կամ գրիչներ և օժանդակ այլ վարպետներ (քարտաշ, որմնադիր և այլն)։

Սեդրակ Բարխուդարյանի գիտա-հետազոտական ուշագրավ աշխատանքներից պիտի համարել նաև «Հայ կնոջ իրավական վիճակը միջին դարերում» խորագիրը կրող հոդվածը[3], որին աղբյուր են ծառայել գլխավորապես հայ վիմական արձանագրությունները, ձեռագրական հիշատակարանները և մասամբ՝ հայ կնոջ իրավական վիճակը շոշափող հին ու նոր գրավոր աղբյուրները (հիմնականում դատաստանագրքերը), ժողովրդական բանահյուսությունը։ Հեղինակը իրավացիորեն արձանագրում է, որ պատմագիտական երկերում, ուր ժողովրդի ներքին կյանքը գրեթե չի շոշափված, կանանց իրավական վիճակի մասին շատ քիչ բան է պահպանվել։ Այս աշխատության մեջ հանգամանորեն ապացուցվում է, որ միջին դարերում հայ կինը օգտվել է քաղաքացիական մեծ իրավունքներից։ Դատաստանագրքերում և հատկապես վիմական արձանագրություններում եղած բազմաթիվ փաստերը ապացուցում են, որ իրավական տեսակետից սկզբունքային սահմանափակում չի եղել հայ կնոջ նկատմամբ։ Նա մասնակցել է բոլոր տեսակի հասարակական գործերին, դատարանի առաջ հանդես է եկել որպես լիիրավ քաղաքացի։ Գրավոր և սովո-

3 «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 2, էջ 25—40։

րությունական օրենքով հայ կինը հավասար մաս ու բաժին է ունեցել հայրենական տան ընդհանուր ստացվածքից։ Միջնադարում ժողովրդական ընտրությամբ գործող երկու հիմնարկություններում՝ վանքերի հոգաբարձական կազմում և գյուղական համայնքի ավագների ժողովին հավասար իրավունքով մասնակցում էին նաև հայ կանայք։ Հիմնվելով անհերքելի փաստերի վրա, հեղինակը միակողմանի, անհիմն և պատմականությունից զուրկ է համարում XIX դարի ազգագրական նյութեր հավաքողների, ինչպես նաև օտար հեղինակների մեծամասնության կարծիքները հայ կնոջ «ստրկական» վիճակի մասին։

Առանձին գրքով լույս է տեսել հնագետ-պատմաբանի մի այլ աշխատությունը, որ նա գրել է Հայաստանի հուշարձանների պահպանության կոմիտեի հանձնարարությամբ։ Այն լույս է տեսել 1935 թ. «Սովետական Հայաստանի հնությունների տեսակներն ու նրանց պահպանության անհրաժեշտությունը» վերնագրով։ Այդ աշխատությունը կարևոր նշանակություն ունեցավ Հայաստանի տարածքի վրա ցրված բազմաթիվ և բազմազան արժեքավոր հուշարձանների մնացորդների պահպանության գործը կազմակերպելու և ամրապնդելու համար, ընդարձակեց Սովետական Հայաստանի նյութական մշակույթի մնացորդների տեսակների մասին մինչ այդ գոյություն ունեցող սահմանափակ պատկերացման շրջանակը։ Նշված գրքով ընթերցողը ծանոթանում է Հայաստանի հասարակական հին տնտեսաձևերի (նախնադարյան-համայնական հասարակություն, որն ընդգրկում է պալեոլիթը, նեոլիթն ու բրոնզե դարը, և ֆեոդալական հասարակություն) նյութական մշակույթի մնացորդներին։

1947 թ. Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի «Տեղեկագրի» № 5-ում լույս է տեսել գիտնականի «Մի քանի դիտողություններ Երևանի Կաթողիկե եկեղեցու արձանագրությունների վերաբերյալ» խորագրով հոդվածը։ Հենվելով 1301 թ. արձանագրության վրա և ուրիշ մի շարք ապացույցներ բերելով այլ վիմական արձանագրություններից, հեղինակը համոզիչ կերպով ցույց է տալիս, որ Երևանը XIII դ. դարձել էր միջնադարյան տիպի քաղաք, վարչական կենտրոն, արհեստավորական և առևտրական ձեռնարկություններով։ Նա ապացուցում է, որ մինչ այդ Երևանը քաղաքատիպ վայր չէր, այլ գերազանցապես այգեգործական։ Սակայն XIV դ. ձեռագրերի հիշատակարաններում Երևանը հանդես է գալիս արդեն որպես «գյուղաքաղաք» կամ «քաղաք», իսկ պարսկական տիրապետության շրջանի հիշատակարանների մեջ՝ նույնիսկ «մայրաքաղաք» անունով։

XIII դ. երկրորդ կեսից, երբ Հայաստանը սկսում է ապրել համեմատաբար խաղաղ ժամանակաշրջան, Երևանը դառնում է վարչա-քաղաքական կենտրոն, առևտրա-արհեստավորական ձեռնարկություններով և բազմաթիվ «կուղպակներով» (խանութներով)։ Երևան քաղաքի զարգացման հետ կապ ունի նաև Կաթողիկեի 1264 թ. վիմական կալվածագիր արձանագրության մեջ հանդես եկող անեցի Ավետենց որդի «պարոն Սահմադինը», որը XIII դ. երկրորդ կեսի նոր տիպի կալվածատեր է, առևտրական նոր կուտակվող կապիտալի տիպիկ ներկայացուցիչ, որը կալվածներ է ձեռք բերում դրամի միջոցով։ Մրենի 1284, Արուճի 1291, Օշականի 1286, 1288 և 1295 թթ. վիմական արձանագրությունների մեջ Սահմադինը հանդես է գալիս որպես քաղաքային տիպի՝ առևտրով, մանավանդ վաշխառությամբ կուտակած միջոցներով

հարստացած անձ։ Սահմադինը հիշվում է արձանագրությունների մեջ նաև իբրև «բարեգործ», այս կամ այն հարկը վերացնողի դերում։

Հեղինակը Կաթողիկեի մեկ ուրիշ վիմական արձանագրության միջոցով աշխատում է որոշել միջնադարյան Հայաստանի տնտեսական կյանքի ամենակարևոր մի բնագավառի՝ հողի դինը։ Ֆեոդալական ֆորմացիայի արտադրության հիմնական միջոցը հողն է։ Այդ պատճառով հեղինակը կարևոր է համարում որոշել հողի «իրական-դրամական» դինը. դա, նրա խոսքերով, կարող է խոշոր լծակ դառնալ Հայաստանի տնտեսական կյանքի միջնադարյան շատ երևույթները հասկանալու համար։ Կաթողիկեի այդ արձանագրության մեջ հիշատակված է եկեղեցուն որոշ նպատակով նվիրվող հողի չափը՝ 50 կապիճ։ Կապիճ բառը բազմաթիվ անդամներ հիշատակվում է վիմագրությունների մեջ, բայց որպես ցորենի չափ, հարկերի դանձման կամ զիջման կապակցությամբ։ Հիմնվելով մի շարք վիմագրություններում հիշատակված փաստերի վրա, Բարխուդարյանը հաշվարկումներով հաստատում է, որ 1301 թ. ընդունված դրամական միավորով՝ դահեկանով, 50 կապիճի տարածության հողամասը արժեր 50 դահեկան։

Բարխուդարյանի ծառայությունները հայագիտության առանձնապես մեծ են վիմական արձանագրությունների հավաքման, նրանց ճշտման և վերծանման ասպարեզում։ Անցյալի մեր նյութական մշակույթի հուշարձանները (եկեղեցի, դավիթ, խաչքար, բերդ, գերեզման, կոթող, սահմանային քար և այլն) պատմագիտական մեծ արժեք են ձեռք բերում հայ ժողովրդի դարավոր մշակույթի, նրա ներքին կյանքի պատմության ուսումնասիրության համար աղբյուրագիտական մեծարժեք նշանակություն ունեցող իրենց վիմական արձանագրություններով։

«Հայաստանի կյանքի առավել հետաքրքրական կողմը,— ասում է Հ. Օրբելին,— ժողովրդի կյանքը, ոչ միայն ընտանեկան կենցաղը, կահկարասին, քաղաքային բարեկարգությունը, այլև միջնադարյան հայ քաղաքի հասարակական կառուցվածքը մնում էին միանգամայն անհայտ, քանի որ չէին ուսումնասիրվել վիմագրությունները, հնագիտական հուշարձանների այն առաջին տեսակը, որը պատմագիտական աղբյուրների շարքը մտավ շնորհիվ Մ. Բրոսսեի և Ղևոնդ Ալիշանի։ Առանց վիմական արձանագրությունների, առանց բազմաթիվ հարկային ու պարհակային տերմինների, ճանապարհային, մաքսային և այլ տուրքերի անվանումների վերլուծության, անհնար կլիներ դաղափար կազմել քաղաքի ֆինանսական կարգի մասին... Վիմական արձանագրությունները երբեմն հնարավորություն են տալիս որոշելու նույնիսկ հարկային և մաքսային վճարումների չափը։ Բացառիկ հարուստ նյութ են պարունակում վիմագրությունները նաև մասնավոր-իրավական հարաբերությունների բնութագրման համար. դրանք պայմանագրեր են հողատարածությունների համատեղ օգտագործման, ունեցվածքի բաժանման, կալվածագրերի մասին՝ բոլորը փորագրված վանքերի պատերին»[4]։

ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտը նախաձեռնեց հայկական վիմական արձանագրությունների հավաքման և գիտական լիակատար ժողովածուի հրատարակության՝ «Դիվան» (Corpus) ընդհանուր խորագիրը կրող մատենաշարով։ Այդ պատասխանա-

[4] Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», I, Երևան, 1966, էջ VIII, IX։

տու, հմտություն ու փորձ պահանջող աշխատանքի ղեկավարությունը հանձնարարվեց Սեդրակ Բարխուդարյանին։

Այդ նպատակով կազմակերպված հատուկ գիտարշավների առաջին հինգ տարիների ընթացքում Բարխուդարյանը, լուսանկարիչ Արտաշես Վրույրի աշխատակցությամբ, հավաքեց պատմական Սյունիքի երեք շրջանների՝ Գորիսի, Սիսիանի և Ղափանի վիմական արձանագրությունները, որոնք ամփոփված և հրատարակված են «Դիվան հայ վիմագրության» երկրորդ պրակում (1960 թ.)։ Այդ հրատարակության առաջին պրակը ամբողջովին նվիրված է ակադեմիկոս Հովսեփ Օրբելու՝ Անիում անցյալում ժողովված վիմական արձանագրություններին, որոնց խմբագրությունը և հրատարակությունը հեղինակը իր մահվանից առաջ վստահել էր Սեդրակ Բարխուդարյանին, ճանաչելով նրան որպես վիմական արձանագրությունների հմուտ վերծանողի։ Օրբելին Բարխուդարյանին էր հանձնել խմբագրելու և հրատարակելու նաև Արցախի նշանավոր Գանձասարի վանքի պատմական մեծ նշանակություն ունեցող վիմական արձանագրությունները։ Գիտնականը զբաղված էր այդ վիմագրությունների հրատարակության նախապատրաստությամբ, երբ վրա հասավ անսպասելի մահը (1970)։

Բարխուդարյանը խորապես գիտակցում էր, որ վիմական արձանագրությունների հավաքման և հրատարակման գործը բարդ և մեծ ջանքեր պահանջող գիտական կարևոր աշխատանք է։ Նա հավաքում էր անխտիր բոլոր վիմագրությունները, մեծ թե փոքր, անդամ կոտրտված արձանագրական ֆրագմենտները՝ սկսած հնագույն ժամանակներից մինչև XVII դարը ներառյալ։ Հավաքված արձանագրությունների հրատարակությունը կատարվում էր ըստ վայրի կամ հուշարձանի, խստորեն պահպանելով ժամանակագրական կարգը։ Նախ դրվում էր յուրաքանչյուր վիմական արձանագրության ճշգրիտ գծագիր պատճենը և ապա լուսանկարը՝ իբրև սկզբնաղբյուր։ Տվյալ շրջանի վիմագրությունների բնագիրը ներկայացնելիս տրվում են պատմական համառոտ ծանոթագրություններ, իսկ երբեմն էլ՝ ընդարձակ, եթե խոսքը վերաբերում էր գրականության մեջ քիչ հայտնի վայրերի և հուշարձանների։ Համապատասխան տեղեկություններ են տրված նաև յուրաքանչյուր արձանագրության տեղի, դիրքի, ներկա վիճակի, վնասվածքների մասին։ Դիվանի ամեն մի պրակ օժտված է նաև անհրաժեշտ գիտական ապարատով (անձնանունների, տեղանունների և առարկայական ցանկեր)։

Ի մի հավաքելով և ճշգրտելով վիմագրության բնագավառում անցյալից կուտակված նյութերը և շարունակելով գիտական մեթոդով հավաքել, մշակել ու հրատարակել տակավին անհայտ վիմական արձանագրությունները, Բարխուդարյանը ծրագրել էր ընդգրկել Սովետական Հայաստանի և նրան սահմանակից հայաբնակ շրջանների բոլոր արձանագրությունները։

«Դիվանի» երրորդ պրակը լույս տեսավ 1967 թ.։ Այն ամբողջովին ընդգրկում է Հայոց Ձորի (Եղեգնաձորի և Ազիզբեկովի շրջանների) հուշարձանների վիմական արձանագրությունները։ Հեղինակը Հայոց Ձորի մեծարժեք հուշարձանների և բազմաթիվ վիմագրությունների գոյությունը համարում է արգասիք ժամանակաշրջանի պատմական համեմատաբար խաղաղ կյանքի, տնտեսական ու մշակութային գործունեության բարձր մակարդակի։ Հուշարձանների մի զգալի մասը կառուցված է Բագրատունիների ժամանակ (Գնդեվանք, Ծախացքար, Խոտակերաց ս. Նշան վանք և ուրիշներ), որոնց վրա պահպանվել են հնագույն

բազմաթիվ վիմագրություններ, մյուս մասը՝ XIII և XIV դարերում (Թանաատի, Հերհերի վանքեր, բազմասլիսի խաչքարեր)։ Հայոց Զորի արձանագրություններից շատերը հրատարակված են անցյալում բազմաթիվ թերություններով, որոնք պրակում տեղ են գտել համեմատություններից և ճշտումներից հետո միայն։ Երրորդ պրակը ընդգրկում է 813 վիմագրական արձանագրություններ, որոնցից 328-ը լույս է տեսնում առաջին անգամ։

«Դիվանի» չորրորդ պրակը, որի բուն տեքստը բաղկացած է 384 էջից, լույս է տեսել 1973 թ.։ Այն ընդգրկում է Գեղարքունիքի, Կամոյի, Մարտունու, Վարդենիսի (Բասարդեչարի) շրջանների և Կրասնոսելսկի շրջանի մի քանի գյուղերի վիմական արձանագրությունները։ Առաջաբանում տրված է պատմական ծանոթություն Գեղամա երկրի մասին։ Ապա առանձին-առանձին հիշատակված են հուշարձանները, որոնցից քաղված են վիմական արձանագրությունները։ Այստեղ նշվում են նաև յուրաքանչյուր հուշարձանի կառուցման և նորոգությունների տարիները, ավերածությունները, տրվում է նրանց ճարտարապետական ներքին և արտաքին նկարագրությունը։

Սեդրակ Բարխուդարյանի հրատարակած «Դիվանի» երեք պրակներում վիմական արձանագրությունների ընդհանուր քանակն է 2781, նույնքան է և լուսանկարների թիվը։

Հանգուցյալ գիտնականը հրատարակության էր պատրաստում նաև Լեռնային Ղարաբաղի, Լոռու, Շիրակի և Արագածոտնի հուշարձանների վիմագրությունները, որոնք լույս կընծայվեն «Դիվանի» հաջորդ պրակներում։

ЗАСЛУЖЕННЫЙ АРХЕОЛОГ И ИСТОРИК

(К 75-летию со дня рождения С. Г. Бархударяна)

А. Г. ТУМЯН

(Резюме)

Седрак Георгиевич Бархударян (1898—1970) крупный археолог-эпиграфист и историк. В 1935 г. была опубликована монография ученого «Страна Великухи», где на основании клинописных памятников и других данных показана общность топонимов «Великухи» и «Гелакуни» и дано краткое описание некоторых сторон материальной культуры древнейших обитателей Севанского бассейна.

В области изучения истории развития архитектурной мысли в средневековой Армении особую ценность представляет труд Бархударяна «Средневековые армянские архитекторы и мастера по камню» (1963). В нем выявлено около 70 имен армянских зодчих VI—XVII вв., чьими руками воздвигнуто множество архитектурных памятников.

В 1966 г. было опубликовано исследование С. Бархударяна о правовом положении армянской женщины в средних веках. Но венцом всех его научных работ остается свод армянских эпиграфических надписей. В 1960—1973 гг. вышло четыре тома этого труда, в которых показано важное значение этих надписей как первоисточников для изучения истории армянского народа.